ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» 09 2015 թվական N 199-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹՈՐՈՍԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թորոսգյուղի գյուղական համայնքի ղեկավար Արմենակ Սարգսյանը, խախտելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշման պահանջները, համայնքային սեփականության 640.42 հեկտար արոտավայրերի օգտագործման համար վարձավճարներ չի գանձել և արոտավայրերն օգտագործվել են առանց համապատասխան վարձակալության պայմանագրերի կնքման, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 56[1]-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների» 2015 թվականի հուլիսի 30-ի N 04 ակտը և Տեսչության պետի 2015 թվականի օգոստոսի 21-ի N 04 որոշմամբ արված միջնորդությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244[9]-րդ, 281-283-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թորոսգյուղի գյուղական համայնքի ղեկավար Արմենակ Սարգսյանի նկատմամբ նշանակել 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:
2. Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկել Արմենակ Սարգսյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է